

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2022 թվականի
սպրիլի 5-ին կայացած գիտական Խորհրդի N9 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 27-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքն ամբիոններում (նախապաշտպանությունների կազմակերպումն ու արդյունքները)

/զեկ.ամբիոնի վարիչներ/

2. 2022/2023 ուստարվա մագիստրոսի և բակալավրի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների կազմման գործընթացն ամբիոններում

/զեկ.փոխդեկան Վ.Պ.Վարդանյան/

3. «Դասախոսն ուսանողի աչքերով» սոց.հարցման արդյունքների քննարկում

/զեկ.փոխդեկան Ս.Ս.Քելյան/

4. «Երկրաֆիզիկայի» ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերբերյալ

/զեկ.ամբ.վարիչ Մ.Ս.Մկրտչյան/

5. Ընթացիկ հարցեր

Նիստի օրակարգը հաստատելուց հետո

1. **ԼՄԵՅԻՆ.** Սերվիսի ամբ.վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի, Ջրաերկրաբանության և ինժեներական երկրաբանության ամբ.վարիչ պրոֆ.Ս.Հ.Հայրոյանի, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբ.վարիչ դոց.Պ.Գ.Դավթյանի, Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբ.վարիչ դոց.Վ.Վ.Գրիգորյանի, Երկրաֆիզիկայի ամբ.վարիչ դոց.Մ.Ս.Մկրտչյանի, Ռեգիոնալ երկրաբանության

և Օգտակար հանաճոնների հետախուզման ամբ.վարիչ դոց.Շ.Վ.Խաչատրյանի Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոց.Ա.Թ.Գրիգորյանի հաղորդումը ամբիոններում **մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման վերաբերյալ**: Բոլոր ամբիոնի վարիչները նշեցին, որ թեմաները բաշխված են, չկա որևէ ուսանող ով անտեղյակ է իր թեմայից և բոլոր ուսանողները կապի մեջ են իրենց ղեկավարների հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. ղեկան Ս.Գրիգորյանն առաջարկեց ամբիոնի վարիչներին կազմել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապաշտպանության ժամանակացույց և տեղեկացնել ուսանողներին: Նախապաշտպանությունը հնարավորություն կտա ուղղել աշխատանքում առկա բացթողումներն ու թերությունները, ինչպես նաև հղկել ուսանողի մասնագիտական խոսքը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

2. ԼՄԵՑԻՆ. Փոխդեկան Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը **2022/2023 ուստարվա մագիստրոսի և բակալավրի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների կազմման գործընթացի վերաբերյալ**:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

3. ԼՄԵՑԻՆ. Փոխդեկան Ս.Ս.Քելյանի հաղորդումը **«Դասախոսն ուսանողի աչքերով» սոց.հարցման արդյունքների վերաբերյալ**: Խոսքում մասնավորապես նշվեց, որ հարցմանը մասնակցել են ֆակուլտետի ուսանողների թվի ընդամենը 8%, ինչն, ըստ խորհրդի անդամների կարծիքի, չի կարող օբյեկտիվ ընդունվել:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Մինիստրոնիզացնել ուսանողների բոլոր էլ.հասցեները ԵՊՀ-ի ծանուցումներին տեղեկացված լինելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՅԻՆ. «Երկրաֆիզիկայի» ամբիոնի վարիչ դոց.Ս.Ս.Մկրտչյանի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերբերյալ: (Հաշվետվությունը կցվում է):

ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՆ. պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը, դոց.Ս.Ա.Գրիգորյանը նշեցին, որ Ս.Մկրտչյանն ունի գիտական մեծ ներուժ, աշխատասեր է և նվիրված է իր գործին ու գիտությանը: Նրանք բարձր գնահատեցին ամբիոնում կատարված աշխատանքը և առաջարկեցին ընդունել այն և գնահատել բավարար

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել «Երկրաֆիզիկայի» ամբիոնի վարիչ դոց.Ս.Ս.Մկրտչյանի հաշվետվությունը և ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել բավարար:

5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

5.1 ԼՍԵՅԻՆ. Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի «Աշխարհագրություն» դասիչ՝ ԻԴ. 03.01 մասնագիտությամբ հայցորդ Համեստ Ալեքսանի Մկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեման «Լոռու մարզի տարածքային ռեկրեացիոն ներուժը և զբոսաշրջային ռեսուրսների գնահատումը» և գիտական ղեկավար աշխ.գիտ.թեկ., դոցետ Լևոն Մարտիրոսյանի հաստատելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի «Աշխարհագրություն» դասիչ՝ ԻԴ. 03.01 մասնագիտությամբ հայցորդ Համեստ Ալեքսանի Մկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Լոռու մարզի տարածքային ռեկրեացիոն ներուժը և զբոսաշրջային ռեսուրսների գնահատումը» և գիտական ղեկավար նշանակել աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցետ Լևոն Մարտիրոսյանին:

Խորհրդի նախագահ

Ս.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան